Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/2541/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

30 հունվարի 2023թ. **ք. Երևան**

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դանիել Մխեյանի, քննության առնելով թիվ ԵԴ/2541/02/23 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց

«Ջատեգշին» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ նաև Հայցվոր կամ Ընկերություն) հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ նաև Դատարան) ընդդեմ պատասխանող «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատասխանող կամ Կազմակերպություն)՝ հայցելով

1) Անվավեր ճանաչել Կազմակերպության և Ընկերության միջև թիվ Ձորակ ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-22/1-Շին ծածկագրով (այսուհետ՝ նաև Ծածկագիր) մրցույթի (այսուհետ՝ նաև Մրցույթ) արդյունքում 30.08.2022թ. կնքված պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագիր) լուծումը.

2) կանխել իրավունքի խախտումը՝ արգելել /դադարեցնել/ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներգրավելը:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը դատարան են մուտքագրվել 19.01.2023թ.-ին, դատավորի աշխատակազմին են տրամադրվել 23.01.2023թ.-ին:

Դատավորի աշխատակազմը հայտնաբերել է, որ հայցադիմումը ներկայացվել է խախտումներով, այն է՝ պակաս է վճարվել պետական տուրքը և հայցադիմումում չեն նշվել Հայցվորի և Պատասխանողի էլեկտրոնային փոստի հասցեները, ինչի մասին 25.01.2023թ. Դատավորի աշխատակազմը հեռախոսակապով տեղեկացրել է Հայցվորի ներկայացուցչին և ՔԴՕ 127-րդ հոդվածին համապատասխան տրամադրվել է եռօրյա ժամկետ նշված թերությունը վերացնելու համար:

Դատարան 27.01.2023թ. մուտքագրվել է հայցադիմումի և հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդության նոր օրինակներ, ինչպես նաև պակաս վճարված 40.000 դրամ պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:

Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և բացակայում են նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:

Դատարանն արձանագրում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՔԴՕ 27.2 գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով

ՔԴՕ 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է պատասխանող «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-200-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Պարզաբանել կողմերին, որ՝

- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.

- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

- հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

- գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:

- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Գործով եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր սահմանել 28.02.2023 թվականը:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Դ. ՄԽԵՅԱՆ**